ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում ***03.04.2013թ.*** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ

Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ

Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2013 թվականի առաջին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2. Մարզի համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի վերաբերյալ / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

3. ՀՀ Արագածոտնի մարզում ոռոգման համակարգի աշխատանքների կազմակերպման մասին /զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱՔԱՏՅԱՆ/:

4. Առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման, 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպման,

պարարտանյութի և դիզվառելիք հատկացման խնդիրների մասին/զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

5. Մարզում սանիտարական միամսյակ կազմակերպելու գործընթացի մասին /զեկ. քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայան/:

6.Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից զեկուցողների զեկուցագրերը:

Ապրիլի 3-ին կայացավ Արագածոտնի մարզխորհրդի նիստը:Օրակարգային առաջին հարցով մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը զեկուցեց համայնքներում 2013 թվականի առաջին եռամսյակում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձերի և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին:Տեղեկացվեց,որ առաջին եռամսյակում համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը նախորդ տարվա նույն ժամանակաընթացքի համեմատ ավելին է:Այնուհանդերձ,նշվեց,որ նվազագույն ցուցանիշ է համարվում հողի վարձավճարի հավաքագրումը,ինչի վրա հրավիրվեց համայնքների ղեկավարների ուշադրությունը:
Նշվեց նաև,որ մարզի համայնքների 90%-ն արդեն սկսել է հնումների կազմակերպման գործընթացը:

Նիստի քննարկմանը դրվեցին նաև գարնան գյուղատնտեսական աշխատանքների հարցերը:Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու.Ազատյանը ներկայացրեց,որ մարզում ոռոգման ջրի մատակարարման ապահովումն իրականացվում է 7 ՋՕԸ-երի կողմից:Ներկայումս կատարվում են ներտնտեսային և միջտնտեսային ոռոգման համակարգերի մաքրման,մասնակի նորոգումների,ոռոգման շրջանը սկսելու համար նախապատրաստական այլ աշխատանքներ:Զեկուցողը նշեց նաև,որ մարզի համայնքներն ընդգրկված են կառավարության կողմից իրականացվող պարարտանյութի և դիզվառելիքի հատկացման ծրագրերի մեջ:Գումարների հավաքագրման և ներկրման գործընթացը սկսվել է:

Քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայանն էլ տեղեկացրեց,որ ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը մարզում հայտարարված է սանիտարական միամսյակ:Այդ ժամանակահատվածում կազմակերպվելու են շաբաթօրյակներ և մաքրվելու են ինչպես հանրապետական,մարզային ու համայնքային ճանապարհները հարող տարածքները,այնպես էլ բնակավայրերի փողոցները,բակերը,բարեկարգվելու են հասարակական վայրերի,մշակութային օջախների և

հուշարձանների շրջակայքը և այլն:Նա հորդորեց,որպեսզի այդ աշխատանքների մեջ համայնքների ղեկավարները ներգրավեն ողջ բնակչությանը:

Քննարկված խնդիրներին անդրադարձավ մարզպետ Սարգիս Սահակյանը:
Նա նշեց համայնքների սեփական եկամուտների հավաքագրման,նախկինում կուտակված աշխատավարձերի պարտքերի մարման,գյուղատնտեսական աշխատանքների պատճաշ կազմակերպման կարևորությունը:Խոսելով առաջիկա ծրագրերի մասին ,մարզպետն ասաց,որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական հանդիպումների ընթացքում բնակիչների կողմից բարձրացված բազմաթիվ հարցեր են եղել,որոնք բոլորն էլ իրենց լուծումներն են գտնելու առաջիկայում:Այդ նպատակով կօգտագործվեն թե կառավարության կողմից իրականացվող ծրագրերի շրջանակները,և թե կշարունակվի համագործակցությունը տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների,հիմնադրամների,
ընկերությունների և բարերարների հետ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանին

--- Հավաքագրել մարզին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի գումարները:

2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանին

--- Կազմակերպել քննարկում մարզպետի մոտ շահագործումից դուրս եկած ավտոմեքենաների գույքագրման մասով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Աթագածոտնի մարզպետ Ս.Սահակյան

--- Մարզում գետնախնձորի արտադրության հետ կապված տնկարանային տնտեսության ստեղծմանը աջակցելու վերաբերյալ:

--- Լոռու մարզում կարտոֆիլի տնկանյութի առկայության, քանակների, սորտերի և գների մասին:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյան

--- Աջակցել 08.04.2013 թվականին կայանալիք զորահավաքի աշխատանքներին:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա.Բասենցյան

--- Երևանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի օրդինատուրայում պետ.պատվերի շրջանակներում սովորելու համար մինչև ապրիլի 10-ը ՀՀ առողջապահության նախարարություն հայտեր ներկայացնելու մասին:

4. Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ.Դանիելյան

--- <<Հուսո այգի>> երիտասարդ կանանց բարեգործական հիմնադրամի կողմից միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ, կարիքավոր ընտանիքներից ընտրված աղջիկների կրթությունը կազմակերպելու ծրագրի վերաբերյալ:

--- Ավագանիների որոշումներում հաստատել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը և ներկայացնել մարզպետարան:

--- ՏԿՆ-ի առաջարկությամբ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության մշտադիտարկումների անցկացման վերաբերյալ:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ